ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Գյումրի 09.01.2018թ.

Ա/Ձ Սուսաննա Կատայանը, այսուհետ՝ «Մատակարար» ի դեմս տնօրեն՝ Սուսաննա Կատայանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, մի կողմից և Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն այսուհետ «Գնորդ» ի դեմս տնօրեն Գագիկ Ադամյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում Գնորդին հանձնել իր կողմից ձեռք բերված ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց համար:

1.2 Ապրանքների անվանացանկը, քանակը, որակը և գինը որոշվում են թիվ 1 հավելվածով,որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2.Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն ապրանքը մատակարարում է միայն Գնորդի կողմից նախնական վճարման և պատվերն ստանալու պահից հինգ օրվա ընթացքում, պատվերում նշված ծավալներով:

2.2 Մատակարարման օր է համարվում ապրանքը Գնորդի կողմիցստանալու օրը համապատասխան փաստաթղթերով հիմնավորման միջոցով:

2.3 Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Գնորդին է փոխանցվում ապրանքը Գնորդի կողմից ստանալու օրը:

3.Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Մատակարարն իրավունք ունի՝

3.1.1 Սույն պայմանագրով սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը իրեն չտրամադրելու դեպքում հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վճարելու ապրանքների համար:

3.1.2 Եթե գնորդն առանց սույն պայմանագրով սահմանված հիմքերի չի ընդունում ապրանքը կամ հրաժարվում է այն ընդունելուց՝ Գնորդից պահանջել վճարելու այդ ապրանքի համար:

3.1.3 Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում հրաժարվել պայմանագիրը կատարելուց և Գնորդից պահանջել վճարել մատակարարված ապրանքների համար:

3.1.4 Եթե սույն պայմանագրին համապատասխան պարտավոր է գնորդին հանձնել ոչ միայն ապրանքներ, որոնց համար գնորդը չի վճարել, այլև ուրիշ ապրանքները, ապա չհանձնել այդ ապրանքները մինչև նախկինում հանձնված բոլոր ապրանքների համար վճարելը:

3.2 Մատակարարը պարտավորվում է՝

3.2.1 Գնորդին հանձնել սույ պայմանագրով նախատեսված ապրանքները.

3.2.2 ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը.
3.2.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք.
3.2.4 Գնորդին հանձնել սույ պայմանագրով որոշված տեսականու ապրանքները.
3.2.5 Գնորդին հանձնել սույ պայմանագրին համապատասխան որակի ապրանք.
3.2.6 նշումով և (կամ) նկարագրով ապրանք վաճառելիս Գնորդին հանձնել նշումին և (կամ) նկարագրին համապատասխանող ապրանք.
3.2.7 Գնորդին հանձնել սույն պայմանագր կոմպլեկտայնության մասին պայմաններին համապատասխանող ապրանք.
3.2.8 Առանձին փուլերում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայամանագրի գործողության ժամկետի սահմաններում, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:
3.3 Գնորդն իրավունք ունի՝

3.3.1 Ապրանքի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարի կողմից չհանձնելու դեպքում հրաժարվել ապրանքից.
3.3.2 Եթե Մատակարարը Գնորդին հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է , ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.
3.3.3 Եթե սույն պայմանագրին համապատասխան տեսականու և որակի ապրանքների հետ հանձնվել է տեսականու և որակի մասին պայմանի խախտման ապրանք՝
ա/ ընդունել տեսականու վերաբերյալ պայմանին և որակին համապատասխանող ապրանքները և հրաժարվել մնացած ապրանքներից
բ/հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից
գ/ պահանջել տեսականուն և որակին վերաբերող պայմանին չհամապատասխանող ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսականուն և որակին համապատասխանող ապրանքով
դ/ ընդունել հանձնված բոլոր ապրանքները
3.3.4 անկոմպլեկտ ապրանքն հանձնելու դեպքում պահանջել՝
ա/ համաչափ պակասեցնելու ապրանքի գինը
բ/ ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը
3.3.5 ծանուցելով Մատակարարին՝ հրաժարվել ժամկետանց մատակարարված ապրանքներն ընդունելուց:
3.4 Գնորդը պարտավոր է՝
3.4.1Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.
3.4.2 Սույն պայմանագրով սահմանված ժամկետում զննել ապրանքները, ստուգել դրանց քանակը և որակն ու հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.4.3 Մատակարարի հանձնած ապրանքից, սույն պայմանագրին համապատասխան, հրաժարվելու դեպքում ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

4.Ապրանքի գինը եվ հաշվարկների կարգը

4.1Ապրանքի գինը կազմում է հաշիվ ապրանքագրում նշված գումարի չափով:
4.2 Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն կողմերի համաձայնությամբ:
4.3 Ապրանքի գինն իր մեջ ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:
Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է կանխիկ կամ անկանխիկ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
4.4 Տարեկան ծառայությունների և մատուցումների գումարը կազմում է 485800 դրամ:

5.Ապրանքի որակը

Մատակարարը երաշխավորում է մատակարարված որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Ապրանքն ընդունելու ժամանակ Գնորդն ստուգում է դրա համապատասխանությունը փաստաթղթում նշված տվյալներին ըստ անվանացանկի քանակի որակի և տեսականու:
6.2 Ապրանքի հնձնումը և ընդունումը վերջացնելուց հետո Գնորդը ստուգում է ապրանքը ստանալու վերաբերյալ հաշիվ ապրանքագրի համապատասխան տեղում:
6.3 Գնորդի կողմից հաշիվ ապրանքագիրը ստորագրելը նշանակում է, որ ստուգումը կատարվել է ամբողջ ծավալով:

7.Կողմերի պատասխանատվությունը

7.1 Գնորդն իրավունք ունի հրաժարվել վճարելու անպատշաճ որակի ապրանքի համար,իսկ եե արդեն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարները:
7.2 Մատակարարն իրավունք ունի հրաժարվել մատակարարումից, եթե Գնորդը նախնական վճարում չի կատարել կամ խախտել է պայմանավորված ժամկետում մատակարարված ապրանքների վճարման ժամկետը:
7.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարեկու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են, երկրաշարժը,

ջրհեղեղը,հրդեհը, պատերազմը, ռազմական և արտկարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ ամսին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9.Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Շիրակի մարզի դատարանի քննությանը:

10.Այլ պայմաններ

10.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն պայմանագիրը ստորագրելու պահից և գործում է մինչև 31.12.2018թ:

10.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր: Պայմանագիրը պետք է ստորագրեն կողմերը:

10.3 Սույն պայմանագիրը լուծելու և դադարելու հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

ՄԱՏԱԿԱՐԱՐ	ԳՆՈՐԴ
Ա/Ձ Սուսաննա Կատայան	Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլ-կա» ՓԲԸ
Ք. Գյումրի Մուսայելյան 167շ,բն2	ք. Գյումրի Շիրակացի 13,
ՀՎՀՀ 57290247	ՀՎՀՀ 05502201
Արդշինբանկ Գյումրու մ/ճ	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
247260475527	205002300112-1001
Տնօրեն Ս.Կատայան	Տնօրեն Գ.Ադամյան

Գյումրու «Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2018թ.-ի կարիքների համար գնման ենթակա գրենական պիտույքների ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին	Գնման առարկայի անվանում	Չափման միավորը	Քանակ	Գնման առարկայի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները	Միավորի գինը	Ընդամենը/ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7
1	Ամրակ	Տուփ	15	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, վինիլային ծածկույթով, 30 մմ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար: Տուփի մեջ 100 հատ: **«Alpa» կամ համարժեք:**	150,00	2 250,0
2	Ապակարիչ	Հատ	10	Նախատեսված է No 10, No 24/6, No 26/6 կարիչներով կարված թղթերը քանդելու համար: **«Kangaro» կամ համարժեք:**	180,00	1 800,0
3	Դրամարկղի գիրք	Հատ	3	Դրամարկղային գիրք, A4 ձևաչափի. օֆսեթային թղթից.երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90%, խտությունը 80գ/ք.մ. կավճաթուղթ կազմով 350գ/ք.մ, 50թերթ, մետաղակար,սոսնձված,կողքի մասի լիդերինապատումով:	600,00	1 800,0
4	Դանակ	Հատ	12	Դանակ գրասենյակային. սայրի լայնությունը 18մմ,պատյանը և ծայրոցը պլաստիկ: **«Dolphin» կամ համարժեք:**	400,0	4 800,0
5	Ընդգծիչ	Հատ	10	Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված ծայրոցով, տարբեր գույների. տափակ ծայրով: **«Flamingo» կամ համարժեք:**	200,0	2 000,0
6	Թուղթ 50	Տուփ	40	Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ^2: **«Double A» կամ համարժեք:** ԳՕՍ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը 2,5 կգ:	2 400,0	96 000,0
7	Թուղթ 51	Տուփ	25	Թուղթ A4 ֆորմատի գունավոր : Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210x297մմ,կանաչ, կապույտ կամ դեղին գույների, խտությունը 80գ/մ2: «SinAr» կամ համարժեք: ԳՕՍ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ:	2 200,0	55 000,0
8	Թուղթ 51	Տուփ	25	Թուղթ A4 ֆորմատի գունավոր : Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210x297մմ,կանաչ, կապույտ կամ դեղին գույների, խտությունը 80գ/մ2: ԳՕՍ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ:	1 800,0	45 000,0

9	• Թղթապանակ	Հատ	8	Թղթապանակ կոճակով, A4 ֆորմատի, անթափանց տարբեր գույների: «Cosmic» կամ համարժեք:	200,0	1 600,0
10	Թղթադարան	Հատ	5	Թղթադարան, 2 բաժանմունք, մետաղյա, սև գույնի: **«Cosmic»կամ համարժեք:**	2 500,0	12 500,0
11	Թղթապանակ ռեգիստր	Հատ	30	Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, հաստություն 4 սմ,տարբեր գույների: «FIS» կամ համարժեք:	850,0	25 500,0
12	Թղթապանակ ռեգիստր	Հատ	25	Թղթապանակ-ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, հաստությունը 3 սմ, տարբեր գույների: **«TURBO» կամ համարժեք:**	700,0	17 500,0
13	Լրակազմ	Կոմպլ եկտ	3	Սեղանի կոմպլեկտ , մոխրագույն, 6 առարկա՝ 2 գրիչ, 2 մատիտ, մկրատ, քանոն, կարիչ, գրասենյակային դանակ: **«TTS» կամ համարժեք:**	2 600,0	7 800,0
14	Ծրար	Հատ	50	Ծրար սպիտակ, առանձ գրությունների, ինքնասոսնձվող, 110 x 220մմ (A4 ֆորմատի թուղթը 3 անգամ ծալած):	20,0	1 000,0
15	Ծրար	Հատ	30	Ծրար սպիտակ, առանձ գրությունների, ինքնասոսնձվող, (A4 ֆորմատի թուղթը 2 անգամ ծալած):	50,0	1 500,0
16	Կարիչ 4	Հատ	10	Փոքր, կարիչ գրասենյակային՝ 20 էջ կարելու համար: Օգտագործվող ասեղների քանակը՝ 50, ասեղի համարը՝N10: **«Kangaro» HS-10EN կամ համարժեք:**	800,0	8 000,0
17	Կարիչի ասեղ	Տուփ	20	Փոքր ասեղ, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 10մմ/6մմ: Տուփի մեջ 1000 հատ: **«Kangaro» կամ համարժեք:**	70,0	1 400,0
18	Կարիչի ասեղ	Տուփ	20	Միջին, ասեղ գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 24մմ/6մմ : Տուփի մեջ 1000 հատ : **«Kangaro» կամ համարժեք:**	120,0	2 400,0
19	Կոճգամ	Տուփ	2	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով,տարբեր գույների:Տուփի մեջ:	200,0	400,0
20	Հաշվիչ մեքենա	Հատ	6	Հաշվիչ սեղանի , 12 նիշ,միջին չափի, սնուցման 2 աղբյուր,գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, ինքնալիցքավորվող: **«Flamingo CD 2443-12» կամ համարժեք:**	3 500,0	21 000,0
21	Մատիտ	Հատ	35	Մատիտ սովորական, ռետինով, HB: Փայտյա, կարծր կամ փափուկ գրաֆիտով, **«Конструктор» կամ համարժեք:**	80,0	2 800,0
22	Մկրատ	Հատ	5	Մկրատ միջին, 15սմ երկարությամբ: **«Spront» կամ համարժեք:**	400,0	2 000,0
23	Նշումների թուղթ կպչուն 5	Տուփ	10	Նշումների թուղթ ինքնասոսնձվող, 37մմ x 51մմ չափերի , 100 թերթ, դեղին գույնի: **«Fantastick (EU)» կամ համարժեք:**	80,0	800,0
24	Նշումների թուղթ կպչուն 6	Տուփ	15	Նշումների թուղթ ինքնասոսնձվող,76մմ x 76մմ չափերի, 100 թերթ, դեղին գույնի: «Fantastick (EU)» կամ համարժեք:	100,0	1 500,0
25	Նշումների թուղթ կպչուն 6	Տուփ	15	Նշումների թուղթ՝ ինքնասոսնձվող 76մմ x 102մմ, դեղին գույնի,100թերթ: «Fantastick (EU)»կամ համարժեք:	300,0	4 500,0
26	Ջնջոց	Հատ	20	Ռետինե ջնջոց 30 մմ նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար: **«FABER-CASTTELL» կամ համարժեք:**	150,0	3 000,0
27	Սրիչ	Հատ	10	Սրիչ մատիտի համար սովորական, պլաստիկ, առանձ պահուցի, ամրացվող: **«Maped» կամ համարժեք:**	200,0	2 000,0
28	Սեղմակ 1	Հատ	20	Մետաղական, թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը15 մմ, արդյունավետ ամրեցնում է մինչև 40 թերթ: **«Cosmic» կամ համարժեք:**	10,0	200,0
29	Սեղմակ 3	Հատ	20	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 25 մմ, արդյունավետ ամրեցնում է 60-90 թերթ: **«Cosmic» կամ համարժեք:**	25,0	500,0

30	Սեղմակ 5	Հատ	20	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 41 մմ, արդյունավետ ամրեցնում է 120-150 թերթ: **«Cosmic» կամ համարժեք:**	40,0	800,0
31	Սոսինձ չոր	Հատ	8	Սոսինձ չոր, չափագրված 35գր: **«FANTASTIK» կամ համարժեք:**	450,0	3 600,0
32	Քանոն	Հատ	8	Ուղիղ քանոն գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30սմ,պլաստմասե նյութից: **«Flamingo» կամ համարժեք:**	100,0	800,0
33	Ֆայլ 1	Տուփ	10	Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 40 միկրոն, թափանցիկ: **«Flamingo» կամ համարժեք:**	1 800,0	18 000,0
34	Ֆայլ 30	Տուփ	20	Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 50 միկրոն, թափանցիկ: **«Impulse» կամ համարժեք:**	2 000,0	40 000,0
35	Թղթապանակ	հատ	50	Թղթապանակ սեղմակով, A4 ֆորմատի:	350,0	17 500,0
36	Թղթապանակ	հատ	25	Թղթապանակ սեղմակով, A4 ֆորմատի:	450,0	11 250,0
37	Թղթապանակ ֆայլով	հատ	10	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 30 թափանցիկ ֆայլով, կանաչ:	400,0	4 000,0
38	Շտրիխ	հատ	15	Ջնջիչ շտրիխ գրիչատիպ 6մլ:	200,0	3 000,0
39	Թանաք	հատ	10	Թանակ շտամպի տուփի բարձիկների համար, 30մլ,/ տարբեր գույներ /:	150,0	1 500,0
40	Գրասենյակային գիրք	հատ	30	Գրասենյակային գիրք,A4 ձևաչափի (210X297 մմ) ,սպիտակությունը ոչ պակաս քան 70%, խտությունը 45-50գ/ք.մ. , 96 թերթ, կոշտ կազմով:	450,0	13 500,0
41	Գրիչ	Հատ	85	Գրիչ գնդիկավոր, պլաստմասե,թափանցիկ իրանով, կափարիչով կապույտ,սև կամ կարմիր գույների : **«TRI-FLO» կամ համարժեք :**	80	6 800,0
42	Շտամպի բարձիկ	Հատ	1700	Բարձիկ դրոշմակնիքի համար, իր տուփով՝ 6.5 x 8.5 սմ չափերի,/տարբեր գույների/: «HORSE» կամ համարժեք:	10	17 000,0
43	Լրակազմ	Կոմպլեկտ	3	Սեղանի կոմպլեկտ , մոխրագույն, 11 առարկա՝ 2 գրիչ, 2 մատիտ, ռետին, մկրատ, քանոն 15սմ, սրիչ, կարիչ, կարիչի ասեղ, հակակարիչ, նշումների համար 100 էջ, գրասենյակային դանակ: **«TTS» կամ համարժեք:**	3500	10 500,0
44	Նոթատետր	Հատ	22	Նոթատետր, A4 ֆորմատի, տողանի, 70 թերթ:	500	11 000,0
	ԸՆԴԱՄԵՆԸ					485 800,0

ԳՆՈՐԴ

«Էնրիկո Մատտեի անվ. պոլ-կա» ՓԲԸ
ք.Գյումրի, Շիրակացի 13
ՀՎՀՀ 05502201
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205002300112-1001
Էլ.փոստ՝ enricomatte@mail.ru
Տնօրեն՝ Գ.Ադամյան

ՄԱՏԱԿԱՐԱՐ

Ա/Ձ Սուսաննա Կատայան
Ք. Գյումրի Մուսայելյան 167շ,բն2
ՀՎՀՀ 57290247
Բանկ՝ Արդշինբանկ Գյումրու մ/ճ
Հ/Հ 247260475527
Էլ.փոստ՝
Տնօրեն՝ Ս.Կատայան

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՏԱՅԱՆ
ՕՍ 892445
KATAYAN
SUSANNA
57290247